№ 116 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 1 ՅՈՒՆԻՍԻ · 1910 · ԵՐԵՔՇԱԲԹԻ, 1 ՅՈՒՆԻՍԻ № 116

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարինը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են ռուբլանչիւր տողատեղին 20 կօպէկ.

Խմբագրատան տէլէֆօն № 253

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կօպ., վերջին երեսի վրա՝ 10 կօպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով՝ Մօսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Արուսեակ Սարգսեան Մելիք-Նուբարեան՝ իր երեխաներով՝ սրտի կսկիծով յայտնում է ազգականներին և ծանօթներին անժոռանալի ամուսնու և հօր՝

Տիգրան Գրիգորեան Մելիք-Նուբարեանի

ժահվան մասին: Յուղարկաւորութիւնն այսօր, երեքշաբթի, յունիսի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր սեփական տնից, Վելեմինսկայա փողոց № 24, դէպի Նորաշէնի ս. Աստուածածնի եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը: 669. 1—1

Աղալօ և Սօֆիա, Մարիա, Օլգա, Նունէ, Աստղիկ և Մնացական Ամիրբէգեաններ խորին վշտով յայտնում են ազգականներին, ծանօթներին և հանգուցեալի ընկերուհիներին՝ առաջին երկուսն իրանց վաղամեռիկ դստեր, իսկ վերջինները իրանց սիրելի և անմոռանալի քոյր՝ IV գիմնազիաստ և Զգրաշէնի դպրոցի վարժուհի

ԱԹԵՆԻԿ ԱՄԻՐԲԷԳԵԱՆԻ

ժահվան մասին, որ տեղի ունեցաւ մայիսի 30-ին: Ամբիծքը հանգուցեալի բնակարանում (IX գծ., Церковная ул. д. № 14) վաղը, չորեքշաբթի, երեկ. ժ. 7-ին: Թաղման օրվայ մասին կը յայտարարվի առանձին: 674. 1—1

ԿՈՉ

Վարագայ վանքի կրթական հաստատութեան յիսնամեակի Յօբելեանը, Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի վերին հովանաւորութեամբ, պիտի տօնվի յունիսի 20-ին (ըստ ն. տ. յուլ. 3-ին) կիրակի օրը, Վարագայ վանքին մէջ, ժողովրդական լայն մասնակցութեամբ:

Ուստի յատկապէս հրաւիրվում են Հայութեան բոլոր ցրված գաղութի անհատները և կրթական, գրական, բարեգործական հաստատութիւնները իրանց նիւթական և բարոյական մասնակցութեամբ շքեղութիւն տալու նոյն հանդիսին:

Ամեն առաջարկի համար՝ հասցէ.—
Առաջնորդարան Հայոց, Վան,
«Վարագայ Յօբելեանի Յանձնախումբին»:
(Ե.) առ. 615. 3—2

ԻՒՐԻՒՂՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԸՆԹԱՑԳՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Բացված է խնդիրների ընդունելութիւն բժշկական և բնագիտական-պատմական I, II և III կուրսերը, նոյնպէս և մաթեմատիկական ֆակուլտէտի I և II կուրսերը մտնելու համար:

Ընդունվում են ունկնդիրներ երկու սեռից,

Ուսման վճարը՝ բժշկական և բնագիտական-պատմական ֆակուլտէտների համար՝ իւրաքանչիւր սեմեստրը 75 ր., իսկ մաթեմատիկականի համար 50 ռուբլի:

Դասընթացքների վերատեսուչ՝ պրոֆես. Մ. ՐՕՍՏՕՎՑԵՎ
(Ե.) առ. 668. 2—1

ԳՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ Ա. ՌԵՒՏՐԻ ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

ԼՈՒԱՑԷՔ ՅԱՐԴԵԱՑ ԳԼԽԱՐԿՆԵՐԸ ՄԻԱՅՆ „ՍՏՐՕԲԻՆՈՎ"!

Պատեճեցային միջոց

Գլխարկը մի քանի րօպէում դառնում է կատարելապէս մաքուր, արագ չորանում է և ստանում է նորի տեսք: «ՍՏՐՕԲԻՆԸ» չէ փչացնում յորդը և նրան չէ դարձնում խուց.

Address Télégraphique SANITAS

Адресъ Телеграммъ САНИТАСЪ Тифлисъ

առ. 675. նացած: 1—1

Թիֆլիսի Ժողովարան

ԱՄԱՐԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆ

Այսօր, երեքշաբթի, յունիսի 1-ին տեղի կունենայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

ԼԱՐԱՆՈՒԱԳՆԵՐԻ ԽՈՒՄԲ՝ ղեկավարութեամբ Ս. Ի. Պրէսմանի և ՍԱԶԱՆԴԱՐ:

ՊԱՐԵՐ

Եւրոպական և կովկասեան

Հիւրերը՝ համաձայն ընդհ. հիմունքների ժուռքի համար վճարում են—տղամարդիկ 1 ր., կանայք 50 կ.:

(առ.) 673. 1—1

ԲԺԻՇԿ

Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.

Ընդունելութիւնը { առաւօտեան ժ. 11—1. երեկոյեան ժ. 5—7.

Աբաս-Աբադակայա, տուն Միրիմանովի:

Չորեքշաբթի, յունիսի 2-ին, երեկ. ժ. 7½-ին

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ

ճեռնակված է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

(Շարունակութիւն մայիսի 29-ի)

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿ.

Ընթացիկ հարցն է՝ ընտրութիւն վարչութեան անդամների և փոխանդամների:

(ա. օ.) առ. 672. 2—1

ԸՆՏՐԱԿԱՆ ԱՆՊԱՏԵՀՈՒԹԻՒՆՆԵՐ

Մայիսի 30-ի ընտրութիւնները հանդէս բերին երկու տեսակ երևոյթ: Կամ եկեղեցիներում շատ քիչ մարդ էր լինում հաւաքված, երբեմն նոյն իսկ տասն անձից պակաս, կամ ժողովականների չափազանց մեծ թիւ բազմաթիւ կողմնակի անձերով:

Առաջին դէպքում մենք գործ ունէինք հասարակական անտարբերութեան հետ. երկրորդում՝ չավազանց տենդոտ, կրքերով լի պայքարի հետ, որը անտես էր առնում վայելչութեան սահմանները:

Ի հարկէ՝ հասարակական անտարբերութիւնը աւելի տարածված երևոյթ է: Եւ եթէ կամենանք՝ նոյն իսկ այն դէպքերում, երբ ժողովականներ հաւաքվել էին մեծ թւով և տեղի ունեցան ծայրայեղ տենդոտ վերաբերմունք զէպի ընտրական գործողութիւնը, դարձեալ հիմնական արատը մնում է անտարբերութիւնը, որովհետև միայն սովորական զանցառու և անտարբեր վերաբերմունքն է քաջութիւն և առիթ ընծայում զանազան տարրերին թոյլ տալու իրանց անսանելի գործողութիւններ, անհեթեթութիւններ և դաւեր, վստահ լինելով, որ հասարակութիւնը անընդունակ կը լինի տէր կանգնելու իր գործերին և զրպելու ամեն տեսակ ոտնձգութիւններ:

Միևնոյն ժամանակ չէ կարելի չընդգծել նաև մի հանգամանք: Ընտրութիւնները տեղի ունեն այնպիսի ժամանակ, երբ արդէն սկսվել են շոգերը, երբ ժողովուրդը ցերեկով շտապում է տուն գնալու և շոգերից պատսպարվելու: Իսկ եթէ ընտրութիւնները առաջ բերեն բողոքներ և վերընտրութիւններ, աւելի ևս դժուար պէտք է լինեն ծխականների նոր գումարումները, որովհետև շոգերը աւելի ևս սաստկանում են, իսկ ծխականների մի մասը հեռանում է քաղաքից:

Ընտրական գործը ցոյց տուեց մի մեծ գործնական անյարմարութիւն այն բանի մէջ, որ ընտրող ծխականները և կողմնակի հանդիսատեսները յաճախ լինում են միասին նստած՝ միմեանց հետ խառն և այդ պատճառով առաջ են գալիս ընտրական գործողութեան մէջ խառնափնթորութիւններ և թիւրիմացութիւններ: Ծխականները պէտք է լինեն բոլորովին զատված հանդիսատեսներից, որպէսզի թէ ընտրական գործողութիւնները կատարվեն անարգել կերպով և թէ տեղի չունենան կողմնակի ազդեցութիւններ ընտրուելիների վրա:

Ընտրական գործը պատասխանատու գործ է և պարունակում է իր մէջ փափկանկատ կողմեր: Ուստի նրա վերաբերութեամբ պէտք է լինել չափազանց դիւրազգաց և նախօրօք հոգատար լինել առաջն առնելու ամեն տեսակ անհարթութիւնների և ընդհարումների:

Նոյն իսկ մի այնպիսի հասարակ բան՝ ինչպէս է քուէտուփեր ունենալը, զանց է առված շատ եկեղեցիներում և ընտրական գործը այդ պատճառով խեղաթիւրվում էր, բարդանում և գաղտնի քուէարկութեան սկզբունքին դաւաճանում: Եւ մենք ունենք առիթներ մակաբերելու, որ մի քանի ընտրութիւններ կը տային ուրիշ հետևանքներ, եթէ խիստ կերպով պահպանված լինէին գաղտնի քուէարկութեան սկզբունքները:

Ընտրական գործավարութիւնը, ընտրական պրակտիկան դեռ մեծ պակասութիւններ ունի և նա առիթ է տալիս թիւրիմացութիւնների:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօուդհէմպտոն, 29 մայիսի

Ռուզվէլտը մեկնեց Նիւ-Եօրկ: (Հ. Գ.)

Վիէննա, 30 մայիսի

Անգլիացի հրապարակախօս Սկօտուս-Վիատօրը հաղորդեց Վիէննայի լրագիրներին, որ ականատես էր ինքը ունգարական ընտրութիւնների ժամանակ կատարված բռնութիւններին՝ մասնաւորապէս Սկալիցայում: Ունգարական «Կօր. Բիւրօն» պատասխանելով այդ մեղադրանքին, չէ հերքում այդ, սակայն կարականապէս պնդում է, որ սլովակ ընտրողներին արգելք չէ դրվեց մասնակցել ընտրութիւններին: (Հ.Գ.)

Լօնդօն, 29 մայիսի

Արտաքին գործերի մինիստրութեան ստատս-սեկրետար Գարբինը նշանակվեց Հնդկաստանի փոխարքայ: (Հ. Գ.)

Սօֆիա, 30 մայիսի

Բոլգարական հեռագրական գործակալութիւնը հաղորդում է. «Ֆրանկֆուրտեր-Ցայտունգի» հեռագիրը, իբր Մակեդոնիա են գնացել 13 բոլգար օֆիցէրներ բոլգարական հրոսակախմբերին կազմակերպելու համար, մտացածին է»:

Առ. ժ. 6-ին Ֆէրդինանդ թագաւորի, թագուհու և թագաւորական ընտանիքի անդամների ներկայութեամբ կայացաւ զօրահանդէս ի պատիւ թիւրքաց գահաժառանգի: Մասնակցում էին 8000 մարդ: (Հ. Գ.)

Ավելինօ, 29 մայիսի

Ժամը 12 և 10 րօպէին Կալիդրիայում զգացվեց նոր երկրաշարժ, որ իրարանցում ձգեց ազգաբնակութեան մէջ: (Հ. Գ.)

Սիատոլ, 29 մայիսի

Հրդեհը ոչնչացրեց 10 քաղաքամաս: Վնասները հաւասարվում են մի միլիոն դոլլարի: (Հ. Գ.)

Պետերբուրգ. — Ինտենդանտական վարչութիւնների գործավարութիւնը քննող սենատօրներին յանձնարարվեց քննութիւնները աւարտել մինչև յուլիսի 17-ը: Հաղորդում են, որ մինչև այդ ժամանակ քննութեան գործը կը յանձնվի դատախազական մարմին:

Մինիստրների կաբինէտը վճռեց Պետական Դումայի պատգամաւորներին տալ տարեկան տասսակներ երկաթուղիներով ճանապարհորդելու համար: («Б.»)

Մօսկվա.—Ժողովրդական համալսարանում վճռվեց փակել իրաւաբանական բաժանմունքը: («Б.»)

Պսկով.—Տեղական գիմնազիայի 6-րդ դասատան աշակերտ Սուգօցկին, քննութիւնից կտրվելու պատճառով, անձնասպան եղաւ: («Б.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թաւրիզ, 30 մայիսի

Եփրեմի զօրամասը Արդաբիլից Բաշտի վրայով մեկնեց Թէհրան, տանելով հետը 60 շահսէվան պարագլուխներ: (Հ. Գ.)

Ուրմիա, 30 մայիսի

Թիւրքերը յայտարարեցին, որ իրանց գրաւած երկիրներում 7 տարով հարկերի գանձումը վերացվում է: (Հ. Գ.)

Թէհրան, 30 մայիսի

Պետական խնամակալը կաբինէտն առանց փոփոխութեան պահեց: Կառավարութիւնը առաջարկեց մաքսարարներին անմաքս բաց թողնել արծաթ՝ փողերանոցի համար: Ռուսական միսսիան բողոքեց այդ միջոցի դէմ, որով պակասեցվում են հիւսիսային մաքսատների եկամուտները ամեն տարի կէս միլիոնով:

Մազանդարանում ռուսահպատակ Սավլաեվի սպանութեան քննութեան գործը պարզեց, որ զրդիչներ հանդիսանում են անջումանի անդամ 3 սէիդներ: Ռուսական միսսիան պահանջում է արձակել նահանգապետին և պատժել յանցաւորներին: (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 30 մայիսի

Թիւրքաց հողի վրա, Կ. Պոլիս-Սօֆիա գծի 263-րդ կիլօմետրի վրա, չարագործները կամուրջի վրա առաջ բերին էկսպրէսսի խորտակումն: Շոգեմեքենան երկու վագոններով ընկաւ գետը, մնացած վագոնները ջարդվեցին: 6 մարդ ծանր վիրաւորվեցին, մի քանիսը՝ թեթև:

«Մ. և Ա.» կոմիտէի ղեկավարները հերքում են այն շշուկները՝ իբր կոմիտէտը մեղաւոր է Անդէդ-Սելիմի սպանութեան մէջ, պնդելով, որ սպանութիւնը բէակցիոն պրովոկացիա է: Մայրաքաղաքում յուզված տրամադրութիւն տիրելու պատճառով սահմանված են զիշերային զինուորական պահակախմբեր: (Հ. Գ.)

Սալօնիկ, 30 մայիսի

Կառավարութիւնը վերատին թոյլ տուեց բանալ սերբերի դպրոցները, երկու ամիս ժամանակ տալով ուսուցիչներին դիպլոմներ ներկայացնելու համար:

Զերնօգորիայի սահմանագլխին ընդհարման ժամանակ սպանվել են 2 զինուոր, 2-ը վիրաւորվել են:

Զինուորական դատարանը Ֆէրիզովիչից տեղափոխվեց Պրիշտին: (Հ. Գ.)

Էդզանի վանք, 29 մայիսի

Դիակօվոյում ազգաբնակութեան զինաթափումը շարունակվում է: Քաղաքում հրդեհված է 24 տուն: Զինուորական դատարանին են յանձնված 14 դրդիչներ: Այս օրերս սպասվում են նրանց մահապատիժները: Զինուորները օֆիցէրների առաջնորդութեամբ շրջապատում են թաղերը և շրջում են տները: Երէկ մի օրում խլվեցին 800 հրացան: Քաղաքացիները սարսափահար են զօրքերի խստութիւնից: Դէզանի վանքի մօտերը գործում են 15 բատարէայով: Ազգաբնակութիւնը ոչ մի ընդդիմադրութիւն ցոյց չէ տալիս: Կարծում են, որ լեռներում գտնվում են 200,000 փախստականներ: Զօրքերը գիւղերում հրդեհել են 60 խրճիթ:

Երէկվանից լեռները փախած բնակիչները սկսեցին կամաց-կամաց տուն վերադառնալ և զէնքերը յանձնել իշխանութիւններին: Զօրքերը պատրաստութիւններ են տեսնում արշաւելու դէպի Մալէսիա: Ունեցած տեղեկութիւնների համաձայն, Մալէսիայի ազգաբնակութիւնը վճռել է հպատակութիւն յայտնել: (Հ. Գ.)

Սալօնիկ, 29 մայիսի

Բեռնակիրները որոշեցին բոյկոտ յայտարարել յունաց ապրանքների դէմ: Ոստիկանութիւնը ցուցակագրում է յունահպատակներին: Յունաց շրջաններում երկիւղ են կրում, թէ այդ միջոցը ձեռք է առնված յունահպատակներին Թիւրքիայից արտաքսելու առիթով: (Հ. Գ.)

Լօնդօն, 29 մայիսի

Ըէյտէրի գործակալութեան տեղեկութեան համաձայն, հովանաւորող-պետութիւնների հիւպատոսները դիմել են կրետական գործադիր՝ մարմնին միահամուռ մի նօտայով, որով յայտնվում է, թէ եթէ կառավարութիւնը մահմէդականներին թոյլ չը տայ մասնակցել ազգային ժողովի աշխատանքներին, այն ժամանակն մեծ պետութիւնները ձեռք կառնեն ակտիվ քայլեր: (Հ. Գ.)

Սօֆիա, 29 մայիսի

Թիւրքաց գահաժառանգը ժամանեց առ. ժ. 11-ին և վագոնից դուրս գալու ժամանակ ընդունվեց թագաւորից: Երաժշտախումբը նուագեց թիւրքաց հիմնը: Փոխադարձ ներկայացումից յետոյ, թագաւորը և գահաժառանգ պրինցն իրանց շքախմբերով դիմեցին պալատ: Բազմամարդ ամբոխը խռնված էր փողոցներում: Պալատի առաջ շարքերով կանգնած էին զօրքերը. քաղաքը զարդարված է թիւրքական և բոլգարական դրօշակներով: (Հ. Գ.)

Բէլգրադ, 29 մայիսի

Թիւրքաց գահաժառանգն այցելեց մզկիթը, ազգագրական մզկիթը, զինուորական դպրոցը, ներկայ եղաւ Բէլգրադի զօրաբանակի զօրահանդիսին: Գահաժառանգը և Բիֆատ-փաշան շնորհակալութիւն յայտնեցին թագաւորին արտադին ընդունելութեան համար: Երեկոյեան պրինց Իզզէդդինը շքախմբով մեկնեց Սօֆիա: (Հ. Գ.)

Բերլին, 30 մայիսի

«Պոստը» մի խիստ յօդուած է տպել Անգլիայի դէմ: Լրագիրն ասում է. «Թէև եռապետեան դաշնակցութեան պետութիւնները չեն կարող մասնակցել Թիւրքիային եռապետեան դաշնակցութեան մէջ մտցնելու հարցի քննութեան, բայց և այնպէս Գերմա-

Դեղերի և գործիքների ներմուծումը Ռուսաստանից դադարեցրեց Ալեքսանդրապոլի գործարանը։ Գործարանի տնօրեն Ս. Ֆինկելշտեյնը հայտնում է, որ գործարանը ունի բավական քանակով դեղեր, գործիքներ, ինչպես նաև գրասենյակային նյութեր։ Գործարանը գտնվում է Ալեքսանդրապոլ, Ֆրանսիական փող. 1։

Ս. Ֆինկելշտեյնի գրասենյակ։

Ս. Ֆինկելշտեյն։

Ս. Ֆինկելշտեյն։

Ս. Ֆինկելշտեյն

[illegible] ամենայն [illegible] ամենայն [illegible] ամենայն [

✦ Կիրակի, մայիսի 30-ին, առաւօտեան վախճանվեց Զգրաշէնի հայոց դպրոցի վարժուհի օր. Ս. Ամիրբէգեանը, որ արդէն հինգ ամիս տառապում էր հիւանդութեան մահճում։

✦ Քաղաքային սանիտար-բժիշկներ նշանակվեցին. 1-ին, 2-րդ և 9-րդ ոստիկանական քաղաքամասերի ազգաբնակութեան համար կին-բժիշկ Ֆօմինա Օսիպովա, 3-րդ և 4 դդ քաղաքամասերում՝ բժ. Քալանթարեան, 5-րդ և 6-րդ քաղաքամասերում՝ բժ. Զաբլուդովսկի, 7-րդ և 8-րդ քաղաքամասերում՝ բժ. Նատիէվ և 10-րդ, 11-րդ և 12-րդ քաղաքամասերում՝ բժ. Միրքաեան։ Թաղական-դումայական բժիշկներ նշանակվեցին 1-ին և 2-րդ քաղաքամասերում՝ բժ. Գէդալին, 3-րդ և 4-ը քաղաքամասերում՝ բժ. Շանվերդեան, 5-րդ քաղաքամասում՝ բժ. Տ. Թադէոսեան, 6-րդ և 7-րդ քաղաքամասերում՝ բժ. Միքելաձէ, 8-րդ և 9-րդ քաղաքամասերում՝ (բժ. Կասումեանի մահվան պատճառով) Թափուր է. 10-րդ, 11-րդ և 12-րդ քաղաքամասերում՝ կին բժիշկ Շէրբինինա։

✦ Քաղաքային լոմբարդը 1909 թ. զուտ եկամուտ է ունեցել 18,838 ր. 40 կ.։

✦ Նաթիս-Ճալա տեղի նաթային հողերի կապալառու Գ. Տէր-Մարգարեանը խնդրաժատոյց է եղել Թիֆլիսի քաղ. վարչութեան, որ այդ հողերի կապալի մասին կազմած պայմանագրի ժամանակը երկարվի դարձեալ 5 տարի։

✦ «Свѣтъ»-ը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրի նախկին օգնական Վ. Գուրկօն, որ դատապարտված էր սենատից Լիդվալի գործի համար, այժմ վերահաստատվել է իր բոլոր իրաւունքների մէջ։

✦ Թոյլատրված է աւստրիահպատակ Վիկտոր Մարգոլիսին աւտոմոբիլների երթևեկութիւն հաստատել Թիֆլիսի և Կոջորի, Թիֆլիսի և Թէլավի Բորժոմի և Աբասթուման միջև։

✦ Նուշուց մեզ գրում են մայիսի 21-ից. «Հաստատ աղբիւրից իմացանք, որ Տեղու դպրոցի (Զանգեզուրի գաւ.) ուսուցիչ Յ. Բէջանեանին թոյլ չը տրվեց շրջելու ու դասախօսելու կովկասեան զեմստվոյի մասին մի քանի գիւղերում»։

✦ «Մշակի» 106-րդ համարի «Նամակ Խմբագրութեան» բաժնում Նուշուց կ. Հ. Բ. Ընկերութեան տեղական ճիւղի տուած հաշուում մի սխալ է սպրդել։ Մն. Խունունցի նուիրած գումարը (տես նուիրատուութիւնների 5-րդ կէտը) ոչ թէ 10 ր. է, այլ 20 ր.։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

«ԳԵՂՈՒՆԻՆ»

Վերջապէս մենք ստացանք Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան յօգուտ Կիլիկիայի հայ որբերի հրատարակած «Գեղունին»։ Շուտով մենք կուղարկենք մեր բաժանորդներին իրանց ստորագրած օրինակները։ Մեզ մօտ կը մնան մօտ 40 հատ, որ ցանկացողները կարող են ձեռք բերել վճարելով 4 ռուբլի։

«Գեղունին» կազմված է այնքան շքեղ, այնքան մեծ խնամքով, որպիսին կարող էր թոյլ տալ եւրոպական տեխնիկայի ամենամեծ կատարելագործութիւնը։ Պատկերների ճոխութեամբ, մաքրութեամբ, նրբութեամբ, բազմագոյն նկարների գեղեցկութեամբ նա կարող է մրցել եւրոպական ամենանշանաւոր պատկերազարդ հրատարակութիւնների հետ։ Եւ Մխիթարեան տպարանը իր այդ հրատարակութեամբ բարձրացնում է եւրոպական ամբողջ գեղարուեստական աշխարհի առաջ հայկական տպագրութեան համբաւը և փայլը և ցոյց է տալիս, որ հայերն ևս կարող են իրանց արժանաւոր պատարագը մատուցանել Գեղարուեստի մեծ տաճարին։

Սկզբում դրված է հ. Մ. Պոտուրեան վարդապետի խմբագրական յօդուածը, ապա Ադանայի եպիսկոպոս Պօղոս Թերզեանի (այժմ հայ-կաթոլիկների պատրիարք-կաթողիկոս) Ֆրանսերէն մի յօդուածը, որին հետևում է Ա. Տերցի իտալերէն մի յօդուածը՝ Un appello pro Vittime del l'Arménia։ Յաջորդ յօդուածն է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Բ-ի «Կոչ առ պատուական Հայաստեայս» յորդորը։ Աւելի մանրամասն գրախօսական կը տանք յաջորդ անգամ։ Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաց նամակ Ա. Սիճանեանին

Մեծ-Ղարաքիլիսա, 24 մայիսի

«Մշակի» № 107-ում կարդացինք ձեր նամակը, ուղղված տեղիս ուսուցիչ Ղարիբեանին, որով դուք նրան հանդիմանում էք զրպարտիչ և առաջարկում էք յետ վերցնելու՝ ձեր հասցէին ուղղած իր մեղադրական նամակը («Մշակ № 102), հակառակ պարագայում սպառնում էք դիմել դատարանի։ Մի կողմ թողնելով այն բոլոր անհեթեթութիւններն ու հակասութիւնները, որոնցով ծայրէ ի ծայր լիքն է ձեր նամակը, այժմ սրանով գալիս ենք յայտնելու ձեզ, որ մենք ևս վիճում ենք Ղարիբեանի՝ «Մշակի» № 102-ում տպված նամակի այն բոլոր կէտերին, որոնցով նա մեղադրում է ձեզ։ Բացի դրանից, սրանով հրապարակ ենք հանում և ձեր բարոյական անանկութեան ամենախոշոր սիրագործութիւնը—այն, որ դուք էք այն տիրահռչակ անօնիմ նամակի հեղինակը (նամակի վաւերացրած պատճէնը ներփակած ուղարկում ենք խմբագրութեան), որով թոյլ էք տուել ձեզ ամենաստոր դարձուածքներով, անեւաւակայելի յիշոցներ շռայլել դպրոցի աշակերտութեան, ուսուցիչ-ուսուցչուհիների և հոգաբարձութեան հասցէին, կարծելով թէ այդ միջոցով կարող կը լինէք ծածկել այն տարաձայնութիւնները, որ գիւղում պատում էր ձեր մասին։ Այժմ մեղադրելով ձեզ Ղարիբեանի նամակի մէջ յիշված բոլոր կէտերում («Մշակ» № 102) և որպէս վերև յիշված նամակի հեղինակ՝ հրաւիրում ենք ձեզ միջնորդ դատարանի։ Մեր կողմից դատաւորներ նշանակում ենք Մատթէոս Տէր-Պետրոսեանին և Յոլակ Խանդադեանին։ Նշանակեցէք ձեր կողմից ևս դատաւորներ։ Այս նամակի լոյս տեսնելու օրից ժամանակ է տրվում ձեզ 5 օր։

Հոգաբարձուներ՝

Մ. Խանդադեան, Ա. Աղաբաբեան, Բ. Մատինեան։

Մեծ-Ղարաքիլիսայի ծխական դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհիներ՝

Մ. Ստեփանեան, Գ. Միսկարեան, Մ. Տէր-Գրիգորեան, Պ. Ղարիբեան, Սօֆիա Թայիրեան, Վարսենիկ Բալասանեան, Մ. Աւետիսեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 20 մայիսի

«Մշակի» էջերում տպված իմ նախընթաց թղթակցութիւններից մէկում գրել էի, որ Թաւրիզի երեք ուսումնարանների ժանկավարժական խմբերն իրանց համագումարներով ձեռնարկել են մշակել ծրագիր ծխական ուսումնարանների համար, և այդ եղանակով միակերպ ծրագրով կը ղեկավարվէին երկթաղի ուսումնարանները՝ փոխանակ զանազանակերպ և անհամաչափ ծրագիրների, որոնցով ընթացել են մինչև այսօր։ Մանկավարժական համագումարի այդ յոյժ շահեկան քայլը ողջունեցի մինչև անգամ ժամանակին, համարելով այդ գործը միանգամայն արդիւնաւէտ ուսուցման և դաստիարակութեան գործին։ Մանկավարժական խմբերի երկու թէ երեք համագումարը տեղի ունեցաւ և, ինձ յայտնի չէ թէ ինչու համար, դադարեց համագումարի նիստը և գործը մնաց կէս ճանապարհում։ Երկնում ևս նորից, թէ ինչու դադարեցին նիստերը, ինչ ինտրիգներ լարվեցին և ինչ նպատակով. այդ իմանում է անշուշտ ինքը համագումարը և ի դէպ է սպասել, որ ի դիմաց համագումարի գէթ մի անգամ կը տայ հարկաւոր բացատրութիւնը ժամուի միջոցով և կը խաղաղեցնէ վրդովված մտքերը։

Մինչև այսօր էլ երկու թաղերի ուսումնարաններում տիրում է, այսպէս ասած, ծրագրային և այլ ժանկավարժական պահանջների տեսակէտից, ապակենտրոնացման յոռի դրութիւնը։ Ոչինչ չունեմ առարկելու, եթէ նոյն դրութիւնը գոյութիւն ունենար մեր քաղաքական կեանքում ընդհանրապէս. բայց ինչ վերաբերում է մանկավարժական ասպարէզին, այդտեղ անպայման թագաւորելու է կենտրոնացման ուղղութիւնը.—համանմանութիւն ուսուցման ծրագիրների, համանմանութիւն ընդհանուր մեթոդիկայի և այլ գործօնների մէջ. այլապէս խոշոր ճնասի և չարիքի դռներ բաց կանենք մեր մանուկ սերնդի համար։ Այս պէտք է քաջ հասկանան մեր ուսուցիչները և հասկանան անձնական ու կուսակցական-թայֆայական շահերը յօգուտ ընդհանուրի։

Հայկազուն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

29 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դատաստանական պալատում քննվեց երդուեալ-հաւատարմատարներ Զարուզնիի, Բօզէնտալի, Սիգօրէնկօյի և Ելիսէէվի, գործը, որոնք 1905 թ. նահանգական դատարանում յորդորում էին դատական իշխանութեան պաշտօնեաներին գործադուլ անել։ Պալատը որոշեց արգելել մեղադրեալներին փաստաբանութեամբ ըզբաղվել մի տարի շարունակ։

Կայսրը, լսելով ներքին գործերի մինիստրի ամենահապատակ զեկուցումը այն մասին, որ տեղական քաղաքացիներ Նիկոլայ և Նադէժդա Բուբլիինները նուիրել են 610,000 ր. և Իվանովո-Վոզնէսէնսկում 30,000 ր. արժեցող հողաբաժին քաղաքային հիւանդանոց կառուցանելու և պահպանելու համար, բարեհաճեց մակագրել. «Անկեղծ շնորհակալ եմ Բուբլիիններից»։

ԿԱԶԱՆ։ Երէկ գիշեր հրդեհի մէջ այրվեցին 6 մարդ։

ՎԱՐՇԱՎԱ։ Սենատորի կարգադրութեամբ ձերբակալվեցին նախկին շրջանային ինտենդանտ գ.-լ. Լիւբան, փոխ-գնդապետ Զիսկանդը, զինուորական խորհրդի գործավար Բօնչ-Բօգդանովսկին։

ՎԱՐՇԱՎԱ։ Գրանդը Բլէբիոյի գործիքով ընկաւ 12 սաժէն բարձրութիւնից և կոտրեց գործիքը։

ՕԴԵՍՍԱ։ Դուման որոշեց մտցնել սանիտարական տուրք 40—50 կ. ամեն մի 18—65 տարեկան բնակչից։ Տուրքից կը կայանայ 400,000 ր. և կը գործադրվի սանիտարական բարելաւումների համար։

ԿԻԵՎ։ Պոլիտեխնիկումի գիւղատնտեսական բաժանմունքում աւարտեց գիտական ագրոնոմի կոչումով առաջինը Ռուսաստանում կին Սերգէեվան։

ՊԱՐԻԶ։ Ուժեղ մրրիկի և հեղեղի պատճառով Վալոն-Սիւլի երկաթուղագծի վրա գնացքը խորտակվեց, դուրս գալով գծից։ Երեք մարդ սպանվեցին. կան մի քանի վիրաւորներ։

Պաղը-Կալէ նահանգում կայծակը սպանեց հինգ մարդ։

ՐՕՎՆՕ։ Բէչից գիւղում, ագրարային յարաբերութիւնների հողի վրա, գիւղացիները սպանեցին հողաչափ Մակարէվսկիին։ Գիւղացիները նեռում էին մանգաղներ և կացիններ։ Խաղաղեցնելու համար եկած պահակախումբը ջարդ կրեց։ Միջնորդ Տրիպօլսկին սպանվեց։ Մահացու վիրաւորվեց մի պահակ. վիրաւորվածների թիւը մեծ է։

30 մայիսի

ՎԱՐՇԱՎԱ։ Սենատօր Նէյդգարդտը քննեց զէմստվային պահակախումբը և պաշտօնից հեռացրեց բաժանմունքի հրամանատար փոխ-գնդապետ Կօվալէվսկիին։ Վերջինիս դէմ քրէական դատ յարուցվեց կաշառակերութեան համար։

ՎԵՍՏԿԱ։ Գրազովի զէմստվային խորհուրդը վճռեց գաւառում այս ուսումնական տարվանից ընդհանուր պարտադիր ուսում մտցնել։

ԽԱՐԿՕՎ։ Լրացաւ պրոֆէսօր Գիրշմանի բժշկական գործունէութեան 25-ամեակը։

ՎԱՐՇԱՎԱ։ Համալսարանին կից կազմվեցին ամարային դասընթացքներ տարրական դպրոցների ուսուցիչների համար։ Դասաւանդում են համալսարանի պրոֆէսօրները և գիմնազիայի ուսուցիչներ։

ԲԼԱԳՕՎԷՇՉԷՆՍԿ։ Ամուրեան երկաթուղագծի վրա աշխատող բանւորները գործադուլ արին տնտեսական պատճառներով։ Միջոցներ ձեռք առնելու համար եկան Իրկուտսկիի գեն.-նահանգապետը և Ամուրի նահանգապետը։ Ուղարկված են չորս վաշտեր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 16.
Տէլէֆօն № 40.
(Ե. ու. Կ.) 984. 100—94

ԲԺՇԿԱՊԵՏ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Ամառը գտնվում է ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ (Կովկաս. հանք. Ջրերում), որտեղ ընդունում է հիւանդներին մինչեւ սեպտեմբեր։ Верхній бульваръ, д. кн. Гирей.
(Ե. Հ. Կ.) 565. 0—7

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՊԵԱՏԻԳՕՐՍԿ
ուր ամառը կընդունէ հիւանդներին։
Սիֆիլիս, միզասեռական և վենեբական հիւանդութիւններ։
(Ե. Հ. Կ.) 955. 100—98

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակվում է
«ԱՂԲԻՒՐ» և «ՏԱՐԱԶ»
պատկերազարդ հանդէսների բաժանորդագրութիւնը։
Հրատարակվում են նոր եւ բազմաբովանդակ։ ՊՐԷՄԻԱՆԵՐԸ շքեղ, ուշագրաւ, իւրաքանչիւր հայի տան ընտիր, ճոխ եւ անհրաժեշտ զարդ։
Տարեկան բաժանորդագինը «ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ»ի բոլոր պրեմիաներով եւ յաւելուածներով դպրոցների, գրադարանների, հասարակութիւնների և հասակաւոր բաժանորդների համար 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.)։ Նոյն «ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ»ը նոյն բոլոր պրեմիաներով և յաւելուածներով դպրոցական աշակերտի հասցէով 5 ր. (արտասահման 10 ր.)։
Ապառիկ և մաս-մաս վճարող բաժանորդ չէ ընդունվում։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „АГБЮРЪ-ТАРАЗЪ". Tiflis. Direction „AGBUR-TARAZ".
(Ե.) 570. 0—4

ՄԱՆԳԼԻՍ ամարանոցում ուսուցչ լեզուի մի վարժուհի տալիս է խմբական դասեր, նոյնպէս և առանձին դասեր ուսուցչ գրականութիւնից։ Պայմանների մասին տեղեկանալ աւելն օր՝ առաւօտ. ժամը 10-ից մինչ. ցեր. ժամը 2 ը՝ Լերմօնտովսկայա փողոց, № 24, ուուրը դարպասից։
(Կ. Ե.) 652. 2—2

Երեքշաբթի, յունիսի 1-ին, երեկոյեան ժամը 7½-ին Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. դահլիճում (Արաս-Արագսկի, № 7), կայանալու է մայիսի 23-ին չը կայացած ժողովի փոխարէն
Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
Օրակարգի խնդիրն է՝ Ընկերութեան ճիւղեր բանալը Բագուում, Բաթումում, Նոր-Բայազէտում, Ալէքսանդրօպոլում, Զուղայում և Կովկասի այլ վայրերում ըստ կանոնադրութեան § 43-ի։ Անդամավճարը 3 ր. է։ Անդամագրվել կարելի է նիստի օրը դահլիճ մտնելիս։
(Ա. Օ.) 646. 3—3

Լոյս տեսաւ
Թատրօնն եւ Երաժշտութիւնը
պատկերազարդ հանդէսի № 5—6.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Երաժշտական բաժին. Երաժշտական գրականութիւնը մեզանում, Ա. Մ.-ի—Հայ գիւղուկ պարը, Կոմիտաս վարդապետի. Հայկական երաժշտութիւն, Ի. Ե. Պապովի.—Արեւելեան համերգ, Ռ. Աշուղեանի.—Ֆելիլիտօն՝ Դպրոցական յիշողութիւններ.—Քրօնիկ։
Դրական բաժին. Կաղնին (բան.), Յովհ. Կոստանեանի.—Աւերակը, Վ. Թալիգայեանի.—Գրչէս, բանաստ. Անտ. Մ.-ի.—Յաղթական գեղեցկութիւնը, Աստոմի.—Սիրոյ տողեր, Ալտենբէրգի։
Թատերական բաժին. Իմ թատրօնական յիշողութիւններից, Գէորգ Զժշկեանի.—Հայկական թատրօնի վիճակը, Պ. Պետրոսեանի.—Ղարագեօզ, Կ. Զալաքի.—Մարկ Տուէն և Բ. Բիէրնսօն, Զ.-ի.—Գրախօսութիւն.—Մեր պատկերները.—Պօստարկղ.—Ստացված հրատարակութիւններ.—Յայտարարութիւններ։
Ամսաթերթի նպատակն է զարկ տալ թատրօնի եւ երաժշտութեան զարգացմանը հասարակութեան լայն խաւերում։
Ամսաթերթին աշխատակցում են մեր թատերական և երաժշտական ասպարէզի լաւագոյն ոյժերը։
Մշտական թղթակիցներ Ռուսաստանի և Կովկասի կենտրօնական քաղաքներում։
Բաժնեգինը տարեկան 2 ր. Բագում, 2 ր. 50 կ. Բագուից դուրս։
Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած հատորները և յաւելուածները։
Բաժանորդներին և գործակալներին կուղարկվի յունիսի 1-ին։
Խմբագրութեան ժամանակաւոր հասցէն. Նամակները, նիւթերը և գրաքները խնդրում ենք ուղարկել հետեւեալ հասցէով՝ Москва, Большая Лубянка, типогр. Аветикова, Маилянъ.
Խմբագիր-հրատ.՝ ԱՆՏ. ՄԱՅԻԼԵԱՆ
635. 1—1

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ
փնտրում է հաշուապահի կամ գանձապահի պաշտօն։ Աւարտել է պ. Նիկողայոս Աբրահամեանի հաշուապահական դասընթացքները։ Գիտէ գրել նաև բէմինգտօնի վրա։ Հասցէն՝ Фоминая ул. № 23, կամ «Մշակի» գրասենեակ։ (Օ. Մ.) 670. 2—1

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՆՈՐՈՒԹԻՒՆ
200 ռուբ. արժեցող ոսկէ ժամացոյցի փոխարէն մենք առաջարկում ենք «ՍԵՑԵՍԻՍ» ժամացոյցը, որն իր ձեւով եւ չքեղութեամբ պակաս չէ ոսկէ ժամացոյցից։ Ժամացոյցը տպավ ձեւի է, արծաթէ բուլու հատութեան, ամերիկեան նորաձեւ ոսկուց, որը երբէք չէ կորցնում իր նախկին տեսքը, օրիգինալ ձայնակարով (տես նկարը)։ «ՍԵՑԵՍԻՍ» ժամաց. տարբերվում է իր ուղիղ ընթացքով եւ առանձնապէս գեղանկարված տեսքով։ Հնոցքը քարերով, լարումը 40 ժամը մի անգամ։ Գինը 3 ր. 75 կ., 2 հատ՝ 7 ր.։ Խուլ ժամ. 3 փականով 4 ր. 75 կ.։ Բոլ ձեւի կանացի ժամաց. 4 ր. 75 կ., խուլ ժամ. 5 ր. 75 կ.։ ՀՐԻ ուղարկվում է գեղեցիկ շղթայ՝ նոր ոսկուց, բրէլոկով եւ այծեմաշկի քսակ ժամաց. համար։ Ժամաց. ուղարկվում է մինչեւ բոլշէները սուս գելուց յետոյ, 6 տարվայ երաշխաւոր., վերադիր վճ. եւ առանց կանխավճ.։ Մինչեւ 2 հատի ճանապարհածախքը 40 կ. (Միրիր 75 կ.)։
Հասցէագրել՝ Складу часовъ Т-ва «УНИВЕРСАЛЪ», Варшава. Холодная, № 22 - 97.
Թղթակցութիւնները ուսերէն։
(1, 11. 22, յ. 2, 12) (В. 39272) 666. 5—1

ԲՈԼՈՐ ՄԵՐ ԱՊՊԱՐԱՏՆԵՐՆ ՈՒՆԵՆ
ՍԵՓԱԿԱՆ ՖԱԲՐԻԿԱՑԻՆ ՄԱՐԿԱ.
„ԳՐՈՂ ՀՐԵՇՏԱԿ"
ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԳՐԱՄՄՕՖՕՆ"
Թիֆլիս, Գօլովինսկի պրոսպ., № 9, տէլէֆոն № 69.
Ունենք հետեւեալ երգիչների պլատինկաները.

ՏԵՂԱԿԱՆ
ԲԱԳՐԱՏ
ՆԻԿՕԼԻ
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ
ՄԷՋԻԴ ԲԷՀԲՈՒԴՕՎ
ՋԱԲԲԱՐ
ԿԱՐԻԱԳԴԻԵՎ
ՄԱՇԱԴԻ-ՄԱՄԷԴ ՖԱՐՋԱԼԻԵՎ
Բ. ԱՄԻՐՋԱՆ, նոյնպէս և՝
ԿՕՎՍԱՋԷ, ԿԱՐԳԱՐԷՏԵԼԻ,
ԹՕՄԱՇԵՎԻՋ և ուրիշ շատերը։

ՌՈՒՍԱԿԱՆ
Ֆ. Ի. ՇԱԼԵԱՊԻՆ
Լ. Վ. ՍՕԲԻՆՕՎ
Դ. Ա. ՍՄԻՐՆՕՎ
Վ. Պ. ԴԱՄԱԵՎ
Ն. Վ. ԳՐԻԶՈՒՆՕՎ
Ա. Վ. ՆԷԺԴԱՆՕՎԱ
Մ. Ա. ՄԻԽԱՅԼՕՎԱ
Ն. Մ. ԵՐՄՕԼԵՆԿՕ-ԻՒԺԻՆԱ
Վ. Ն. ՊԵՏՐՕՎԱ-ՋՎԱՆՑԵՎԱ
Ե. Ի. ՋՕՐՈՒՑԵՎԱ

Պլատինկաները 65 կ. սկսած և թանգ։ Ապպարատները 35 ր. սկսած և թանգ։ Ակցիոներ. Ընկ. պատրաստուածքները կարելի է ստանալ նաև Դ. Ս. ԴԱՒԻԴՕՎԻ մօտ (Սերգիեվսկայա փ., Սօլօլակ, № 1).
ԼԱՒԱԳՈՅՆ ԶՈՒԱՐՃԱԼԻՔ ԱՄԱՐԱՆՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ
АКЦ. О-ВО ГРАММОФОНЪ
Կատալոգները պահանջեցէք ՁՐԻ։
605. 2—2

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.